

«Ասորոց Պաթողիկոսն երկու վարդապետաց Տիտ չորրորդաթի օրը՝ Պատրիարքարան Տեղապատճ Ս. Լոր, և երէկ ալ Ղալաթիա Քաղաքական ժողովոյ ներկայանալով՝ պէտք եղած զիրը մատոյց, և հետեւաբար որոշուեցաւ՝ որ իւր ընտրութեան վաւերացման կայսերական հրովարտակն ու առաջին աստիճանի Մէճիտիյէ պատուանշան խնդրելու համար պատրաստեալ թագրերը Բ. Գըրան տրուի :

Արովհետեւ Պաթողիկոսն այլ և այլ խնդիրն կր կառաջարկէր ազգային Վարչութեան, ազգարարութիւն եղաւ իրեն՝ որ գրով տայ, և միանգամայն ծանուցուեցաւ որ պատրիարքարանի դիւանատան մէջ (ինչպէս ուրիշ յօդուածով մը դիտորդութիւն ըրած էինք) Ասորի և Լոյ կամ տաճիկ լիզուաց հմուտ գրագիր մ'ունենան՝ իրենց կողմանէ առ Պատրիարքարան ուղղեալ գրութիւններն թարգմանելու և անմիջապէս ժողովոյն մատուցանելու համար, և կամ փոխանորդ մի կարգին մայրաքաղաքիս մէջ :

Պաթողիկոսն այս պաշտօնական ներկայացմանց ատեն դառնապէս դանդատեր է հետեւեալ տնիւրութեան դէմ, որուն ենթարկուեր են ասորիք թաւական ժամանակէ հետէ : — Հասուն էՖէնտի պատրիարքութեան ատեն. Մուսուլի մէջ 100ի չափ ասորի ընտանիք հասմեական կրօնքն ընդուներ են : Հասուն էՖէնտի (որոյ յիշատակն օրհնեալ (°) ըլլայ) պաշտպանութեան թեւերը բացեր ատրածեր է նոր հաւատացիոց վրայ, և մինչև անգամ յաջողիք է՝ Մուսուլի մէջ գտնուած ասորի եկեղեցեաց մէջ տեղերէն պատ քաշել տալ, և եկեղեցեաց կէսերն ու եկեղեցական ամբողջ կալուածներն յանուն նորահաւատ սակաւթիւ ասորոց գրաւել, մինչդեռ հազարաւոր տուն բռնիկ ասորիք կգտնուին յիշեալ քաղաքին մէջ : Արդարեւ մեծ զրկանք, որում ոչ որ կրնայ հանդուրժել : Տաճկաստանի մէջ որ ազգ այսպիսի զրկանաց ենթարկուեր է, իրմէ ոմանց բաժնուած ատեն : Մեր ազգէն ալ երկու հերձուած եղած է, բայց չեն կրցած մեր եկեղեցիներէն ու եկեղեցական կալուածներէն ափ մի հող անգամ գրաւել : Ահա Պաղարք ալ բաժնուեցան յոյներէն, բայց կրցան որ և է տեղ իրենց սեպհականի :

Որչափ ծանր է Ասորոց, տեսնել իրենց եկեղեցեաց մէջերէն քաշուած պատերը, և հանապազ երթալ պատին միւս կողմը ժամերգութիւն ընել, ու հանդարտ սրտիւ աղօթքի կենալ : Որչափ ծանր է այս նիւթապէս ու բարոյապէս թըշուառ ժողովրդեան՝ տեսնել իրենց եկեղեցական կալուածոց գրաւումն :

Ըստ որում՝ Ասորիք մեր Պատրիարքարանի պաշտպանութեան տակ կգտնուին, մեր պատրիարքարանին պարտքն է՝ միայն ցաւելով չանցնիլ այս տարօրինակ անիրաւութիւնը, այլ ազդու կերպիւ բողոք բառնալ առ կայսերական արգարատէր կառավարութիւնն : Արդեօք անցեալ ժամանակաց մէջ մեր Պատրիարքարանն ի՞նչ միջոց ի գործ դրեր է՝ ի սկզբան յուզման այս կարևոր խնդրոյն :

Փոստի, թիւ 832, Յունի. 5 :

Մասիւի մէջ երեւցաւ հեռեւեալ կարևոր և հետաքրքրական պարբերութիւն :

ԱԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ի Ե Տ Ի Ք Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ի :

Մեր վաղեմի բարեկամ մեծար. Պ. Տիւլորիէ հայագէտ Գաղղիացին՝ անցեալները գրած էր մեզ թէ բարեբաղդ դիպուածով մը Գաղղիոյ արտաքին գործոց դիւաններէն ձեռագիր մատեան մը գտեր է, որոյ մէջ Աւետիք Պատրիարքին վերաբերեալ բազմաթիւ պաշտօնական թուղթերէ զատ՝ նաև անոր Հայերէն կինսագրութիւնն և ուրիշ այլ և այլ գրութիւնները կան, ամենն ալ իւր ձեռք գրուած, և իմացուցեր էր մեզ թէ ինքն այն ամեն թուղթերն ու գրուածները՝ որք մեծ կակ մատեան մը կրնան կազմել, ամբողջապէս օրինակած ըլլալով, մտադիր էր ամենը մէկէն տրպագրել : Բայց անոր ինքնագիր պատմութեան մէկ օրինակը կը խոստանար յուղարկել մեզ, Մասիւի մէջ հրատարակելու, եթէ կամէինք :

Աւելորդ է ըսել թէ մեր ազնիւ բարեկամին այս կարևոր առաջարկութիւնն ամենայն գոհութեամբ կատարելու պատրաստ ըլլալն իս փութացինք իմաց-

նել իրեն, և վերջապէս երէկ ստացանք խոստացեալ ծրարն հետեւեալ նամակով:

Սիրելի Պ. Բւթիւճեան:

Ահա կը ղրկեմ ձեզ Պ. Պոլոյ Հոյոց հոչար Աւետիք Պատրիարքին կենսադրութիւնը, զոր խոստացած էի հազարիկ ձեզ, Կաստի մէջ հրատարակելու համար: Այս կենսադրութիւնը՝ որ նոյն ինքն Աւետիք Պատրիարքին ձեռք գրուած է, Փարիզի արտաքին գործոց նախարարութեան ղրկաններուն մէջ պահուած մատենակ մը մէջէ դուրս և օրինակեցի: Յիշեալ մատենան ուրիշ շատ գրուածներ ալ կը պարունակէ նոյն տարաբաղ Պատրիարքին գրէն կամ: բանաստեղծութիւններ, աղօթքներ, բանաձեւ ազատութիւն ստանալու համար աղերսագրեր, և վերջապէս իր Պատրիարքութեան օրով Հոյոց ազգին սյլ և սյլ գործերուն վերաբերեալ կոնդակներ, զորս Գաղղոյ ոստիկանութիւնը գրուած էր պատրիարքին Մարտիոս հասած ժամանակը: Մեր ուրիշ ղրկաններուն մէջ ալ շատ մը թուղթեր պատայ Աւետիք Պատրիարքին վերաբերեալ, որքնոր լոյս մը կըստնեն այն խաւարային մէքնայութեան վրայ, որուն զոհ եղաւ Աւետիք, Գիտ կղզիէն դաւով վերցուելը, Մէսինայի հաւատաքնութեան բանաղ գրուելը, յետոյ Մարտիոսի նաւարանին զնդանը դրուելը, անկէջ Սէն Միշէլ լեռան վանքը փոխադրուելով բանտարկուելը, յետոյ Փարիզ տարուելով Պատրիարքին բերդը գրուելը, մեռնելէն ետեւ ալ արեւելեան լիզուաց արքունի թարգման Բրթի Տրլա Գոսայի տունը թաղուելը, մանրամասնարար պատմուած են:

Իրև պետական բանտարկեալ, Լուի ԺՊի հըրամանաւ վերջին խոստութեամբ դաղտնի պահուելէ ետեւ, վերջապէս կաթողիկ կրօնն ընդունելով արձակուած է բանտէն:

Այս ամեն թուղթերն ու գրուածներն, ուր Աւետիք Պատրիարքի պատմութեան հետ նաև Հոյոց այն ժամանակի պատմութիւնն և Սուլթանաց պալատին մէջ եղած յեղափոխութիւնները խառնուած են, թարգմանական վիպասանութեան մը չափ հետաքրքրաշարժ են և գրաւիչ, և երկու հատոր գրքի նիւթ կը մատակարարեն ինձ:

Ձեզ ղրկած կենսադրութիւնս հրատարակած ժամանակից կարաւնամ որ Աւետիք պատրիարքին հոյերէն ոճն և ուղղագրութիւնը բնաւ չփոխուէք, ես ամենայն հաւատարմութեամբ օրինակած եմ զայն: Սուլթան անկատար խօսքեր կան մէջը, զորս պարտք է նոյնութեամբ հրատարակել, բաւական համարելով կանխաւ ղեկուցանել ձեր ընթերցողաց:

Եթէ կուզէք, Աւետիքի մնացեալ գրուածներն ալ կրնամ օրինակել ու ձեզ ղրկել:

Հաւատացէք, սիրելի Պ. Բւթիւճեան, իմ ամենանձնուէր զգացմանցս:

ԷՏ. ՏԻԼՈՐԻԷ:

Յ. Գ. Ձեզ կը յանձնեմ իմ հոյերէն զիրս կարգալու խնամքը, թէ և ղրկուելովն է, և կենսադրութիւնը ճշդելը: Միանգամայն ծանօթութիւն մը դրած եմ կենսադրութեան սկիզբը՝ իբրև ներածութիւն հրատարակութեան, զոր ձեզ կը մնայ հոյերէնի թարգմանել:

Այս նամակէն դիւրաւ կը հասկցուի թէ Պ. Տիլլօրիէ մեր ազգին համար պատմական ամենակարևոր և ամենաթանկագին ղրկու մ'ըրած է, որոյ համար պարտաւոր ենք ոչ միայն ազգովին շնորհակալ, այլ և ձեռնառ իսկ ըլլալ իրեն, որպէս զի այսչափ իմաստով փնտռած ու ձեռք ձգած գրութիւնները ժամ առաջ հրատարակելն ինչպէս որ մտաղիր է:

Աւետիք Պատրիարքին ինքնագիր կենսադրութիւնը ԿԵ երես է միայն, մինչդեռ Պ. Տիլլօրիէի հաւաքած բոլոր գրուածներն ու պատմական տեղեկութիւնները, ինչպէս կրուէ իւր նամակին մէջ, երկու հատոր գիրք կրնան կազմել, զորս ամբողջապէս ի լոյս ընծայելու պատրաստ է, կրուէ մէկ ուրիշ նամակին մէջ, եթէ գրավաճառ մը կամ ուրիշ անձ մը վրան առնու տպագրութիւնը:

Յաջորդ թուով Պ. Տիլլօրիէի ներածութեան թարգմանութիւնը պիտի հրատարակենք, հետեւեալներով ալ Աւետիք Պատրիարքին կենսադրութիւնը:

Մասիս. Թիւ 1488, Յունի. 17.